

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ «ՔԻԹԱԲԻ ԴԱԴԱ ԳՈՐԳՈՒԴՈՒՄ»

Բանասեր, գիտ. զոկտոս Թ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Քիթաբի Դադա Գորգուդ» պատմագրույցը, որ հայտնի է նաև «Օղուդ-նամա»¹ վերտառությամբ, համարվում է ադրբեջանական գրականության հնագույն նմուշներից մեկը, թերևս ամենահինը։ Այն, ինչպես հիշյալ գրքի առաջաբանում նշում է գրականագետ Համիդ Արասլին, մի թանկարժեք աղբյուր է ադրբեջաներեն լեզվի, ադրբեջանական գրականության, ընդհանրապես ադրբեջանական կուլտուրայի պատմությունն ուսումնասիրելու համար։

Բանասերները հաստատում են, որ գրքի բոլոր 12 դաստանները՝ ավանդազրույցները, մի կուռ ամբողջություն են կազմում և ստեղծվել են այժմյան Ադրբեջանական ՍՍՀ տարածքի վրա, ադրբեջանական օզան-աշուղների կողմից։ Դեպքերը տեղի են ունենում Դերբենդ—Սալմաստ—Տրապիզոն—Գանձակ—Բարդա շառավղի վրա ընկած վայրերում. հաճախակի են հիշատակվում Սուրմառին (էջ 83, 144), Աղջաղալան, Շարուրը, Տրապիզոնը, Դերբենդը և այլն։ Այսպես՝ Դադա Գորգուդը «Օղուդներից քոչեց-հեռացավ. գալով Բարդա, Գյանջա, [դրանք] հայրենիք դարձրեց» (էջ 123)։

Ավանդազրույցներից մի քանիսում դեպքերի և գործողությունների վայր է դարձել Սևանա լճի ավազանը. «Երեք հարյուր նիզակավոր քաջեր սրա [Ադրակի] շուրջ հավաքվեցին։ Գինետանը հինգ օր կերուխում եղավ։ Հետո Շարուկի [Շարուրի] ծայրից մինչև Գյոյչա ծովը [Սևանա լիճը] ... Ուղին Առինջի բերդ էր տանում... Վեց հարյուր սևազգեստ այլադավանների սրանց դեմ հանեցին... Ադրակին բռնեցին, Առինջի բերդում բանտարկեցին» (էջ 131—132)։

Գրքի բոլոր ավանդազրույցների միջով կարմիր թելի պես անցնում է քոչվոր ցեղական միության քայքայումը։ Իսլամիզմը մուտք է գործում հասարակության մեջ, բայց դեռ շատ թույլ կերպով, այնպես որ մարդիկ հեշտությամբ կարող էին ուրանալ հավատքը՝ կրոնը. նրանք ավելի բուդդայականներ էին, քան մահմեդականներ։

Ինչպես օղուդների, այնպես էլ «Ադրբեջանական ժողովրդի մեջ ոչ միայն մարդկանց, այլև բոլոր առարկաների անունները Գորգուդի կողմից դրված լինելու մասին հավատքը կա»,— գրում է Հ. Արասլին²։

Գիտական շրջաններին ծանոթ է «Քիթաբի Դադա Գորգուդի» XV—XVI դարերի արաբատառ զրչագիրը. այն կարծիքը կա, թե բնագիրը գրի է առնված XI—XII դարերում, որը, սակայն, ցայժմ չի գտնված։

Այս գրական հուշարձանը թարգմանված է մի շարք լեզուներով. բազմաթիվ արևելագետներ մի ամբողջ շարք ուսումնասիրություններ են դրել այս պատմագրույցի ժամանակաշրջանի, հերոսների և հարակից հարցերի վերաբեր-

¹ «Китаби Дәдә Горгуд», Баки, 1962.

² Տե՛ս նույն տեղում, էջ 9։

յալ, բայց, չնայած դրան, բոլոր խնդիրների շուրջ եղած վեճերն ամփոփող խոր քննական ուսումնասիրություն դեռ չի գրվել:

Օղուղները շիման մեջ են եղել պարսիկ ու արաբ «երկարամորուս թաթ մարդկանց»՝ կրոնավորների և այլադավան-«անհավատների» (հայերի, վրացիների, աբխազների) հետ: Նրանց հարաբերությունները արտացոլվել են նաև լեզուներում, որի վկայությունն են ստորև բերվող բառափոխառությունները:

Սրանցից երեքը՝ ազնավուր, քազավուր և սուր, առաջին անգամ նկատել է Ա. Երևանլին³:

Այդ բառերը իրենց արժեքով և գործածության հաճախականությամբ շատ տարբեր են. մեկից շատ՝ 67 անգամ, գործածվել է քազավուր բառը. արկան, նուր, սուր՝ չորսական անգամ. կոիվ, շուր բառարմատները՝ երեքական անգամ. տատ՝ երկու և այլն:

Азнавур — ազնավուր

Кафирин бири ајдыр: — Газан бәјдә бир һејфимиз галды.
Шөклү Мәлик ајдыр: — Мәрә азнавур, нә һејфимиз галды? (29). («Շոքլե-
ցի իշխանն ասաց. — Ով դու ազնավուր, մեզ համար ափսոսալու ի՞նչ բան
մնաց»):

Այս գրքին կցված բառացանկում (էջ 58) Հ. Արասլին ազնավուր բառը բացատրում է որպես «վրաց ազնվազարմ», որ որոշ վերապահությամբ համապատասխանում է բնադրային նշանակությանը:

Հետևելով БСЭ-ին⁴ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Երեվանլին գրում է. «Азнавур [ուղղելի է՝ азнавур] իր արմատով հայերեն բառ է: Գործածվում է «հսկա, կովարար-մարդ» նշանակությամբ: Ազնվական, Ազնավուրյան, ազնիվ նույն արմատով կազմված բառեր են»⁵: Ա. Երևանլին ճիշտ է նկատում, որ բառի արմատը հայերեն է, բայց նա մտցնում է այդ բառի մի նոր տառադարձություն՝ Азнавур, որ «Քիթաբի Դադա Գորգուդում» չկա:

Ժամանակակից գրական աղբյուրներում այս բառը գործածական չէ, բայց նրա Քյալբաշարի խոսվածքում առկա է азноур ձևով և նշանակում է «որկրամուլ, անկուշտ». — Мәјсүн чох азноур адамды, һеч һәјнән дојмур. («Մոյսունը անշափ ազնուուր մարդ է, ոչնչով չի հագնում»):

Ал — ալ

Այս ձևի տակ բառը «Քիթաբի Դադա Գորգուդում» գործածված է երեք նշանակությամբ. 1. փորձանք, 2. կարմիր, 3. սերունդ՝ ցեղ:

Երկրորդ և երրորդ նշանակություններով բառը բուն օղուգերեն-աղբյուրներն է (երկրորդ նշանակությամբ այն փոխառնված է հայերենում որպես սաստկացուցիչ՝ ալ կարմիր «վառ կարմիր»):

Առաջին նշանակությամբ այս բառը ժամանակակից գրական աղբյուրներում չի գործածվում, բայց աղբյուրներն բարբառներում, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության մեջ (աշուղների երգերում) առկա է.

³ Թ. Երևանլի, Ермәни—Азәрбајчан шифаһи халг әдәбијјаты әләгәләри, Јереван, 1958:

⁴ Азәри—ермәни әдәби әләгәләри, Јереван 1968.

⁵ Թ. Երևանլի, Азәри—ермәни әдәби әләгәләри, 166:

Мәни ал дилә тутма, нә сөзүн вар мәрдәнә дејнән (Бәрдә). — һарада бир көзәл көрүр Достлуг гатыр, ал ејләјир (Ашыг Һүсейн Шәмкирли). («*Ինձ հետ ավրի լեզու մի բանեցրու, ինչ խոսք ունես տղամարդաբար ասա:— Որտեղ մի գեղուհի է տեսնում, բարեկամություն է խաղում, փորձանք բերում*»):

Պրոֆ. Մ. Շիրալիևը այս բառը համարում է վրացական փոխառություն՝ «չրահարս, ջրային փերի» նշանակությամբ⁶:

Հնարավոր է, որ Ղազախի աղբբեջաններեն խոսվածքը, որպես վրացերենի անմիջական հարևան, այս բառը փոխառած լինի վրացերենից և փոխանցած Շամխորի, Բարդայի քույր խոսվածքներին, բայց այս խոսվածքները շատ ավելի հայկական փոխառություններ ունեն, քան վրացական:

Կարծում ենք, որ ինչպես «Քիթաբի Դագա Գորգուգում», այնպես էլ ժամանակակից աղբբեջաններեն խոսվածքներում ալ բառը ներկայացնում է հայերեն ժողովրդական լեզվի ալբ բառը, որ նշանակում է «ծննդկանի թշնամի՝ ալլանդակ կերպարանքով շար ոգի՝ օձն մազերով, պղնձե եղունգներով և վարազի ժանիքներով աներևույթ էգ շարք, որ՝ թշնամի է ծննդկանին, նորածին մանուկներին ու երիտասարդներին»⁷:

Հայերենում էլ այս բառը բնիկ չէ, այլ՝ փոխառյալ պարսկերենից⁸:

Орган — աղվան

«Газан оғлу Урузу һәбсдән чыхарын, боғазындан органла асын...» (36).

«— Өжәр сәни һасардан ашаға органла салландырачаг олурсам, бабана, анана сағлыгла варачаг олурсан, мәни бундан кәлиб һаладлыға гәбул едиб алырмысан? — деди гыз» (56). Оғланын үзәринә үјүшдүләр, зәбун едиб тутдулар. Гарсындан ағ әлләри бағладылар. Гыл орган ағ бојнуна тахдылар» (74). («*Գազանի որդի Ուրուզին բանտից հանեցեք, արկանով վզից կախեցեք... Եթե քեզ արկանով պարսպից ներքև իջեցնեմ... Հյուսված արկանը սպիտակ մարմնին փաթաթեցին*»):

Այս բառը գրական աղբբեջաններենում әркән ձևով է և նշանակում է «բրդե թոկ՝ ձիակապ», որից՝ әркәнлик «ձիակապի համար հարմար նյութ», իսկ խոսվածքներում, օրինակ՝ Կախի շրջանում, գտնում ենք өркән, որ նշանակում է «ձիու բեռը կապելու համար հատուկ գործված կապ՝ թոկ, պարան»: Այս բառը հանդես է գալիս նաև բարդությունների մեջ, ինչպես՝ аторкен (Муган), аторки (Сабирабад) և նշանակում է «ձի օրուկելու արոտատեղի»։ — Аты аторкијә апар («*Ձին օրուկով՝ սեպապարանով, արածելու տար*»):

Հայերեն «օղապարան» նշանակությունը աղբբեջաններենում պահպանվել է՝ սկզբնապես նշանակելով «կախաղանի օղապարան», ապա «շվան» և ապա՝

⁶ М. Ш и р ә л и ј е в, Азербайчан диалектолокијасынын әсаслары, Бақы, 1968, 351—352:

⁷ Հ. ր. Ա. և ա ո յ ա ն, Հայերեն գավառական բառարան, (էմիլյան աղագրական ժողովածու, հատ. Թ, էջ 53):

⁸ Տե՛ս Հ. ր. Ա. և ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 90:

«ձին մի տեղում արածելու համար սեպով պարան» և, վերջապես, փոխարեն-
րաբար «արածելու համար օղապարանի շառավղով տեղ»:

Ձևով հայերենին ավելի հարազատ է նախնականը՝ *орған*, որի մեջ վերջ-
նավանկ շեշտված ձայնավորի տարնամանությամբ բառասկզբի հյ. ա-ն դար-
ձել է օ և բառակազմի կ-ն (հյ. բարբառներում նաև՝ գ կամ դ)՝ Դ, որ համա-
պատասխանում է թե՛ նախորդող և թե՛ հաջորդող ծանր ձայնավորներին:

Աղբբեջաներեն բարբառային ձևերը ներկայացնու՞ն են այս *орған*-ի ան-
միջական շարունակությունն ու ձևափոխությունները (*аторкен* ձևում
վերջնավանկի ға ծանր հնչյունակապակցությունը թեթևացել-դարձել է ке,
իսկ (*аторки* ձևում վերջնահանգ ն-ն ընկել է, ға հնչյունակապակցությունը
թևանալով դարձել кн:

Այս մասնակի, բարբառային փոփոխությունները ամփոփվել են, և դրա-
կան աղբբեջաններենին հատուկ համահնչյունության օրենքով բառը ստացել է
өркән ձևը, որի մեջ հյ.կա > ға > кә > кә փոփոխությունից հետո ստացված
ա ձայնավորի ետընթաց մասնակի համահնչյունությամբ բառասկզբի հյ.
ա > օ-ն դարձել է թեթև օ, որով՝ հյ. արկան—арған > орған > оркен > ор-
кән > өркән:

Արկան բառը ածանցավոր է, կազմված ան ածանցով և արկ «1. ձգել,
նետել, 2. դնել, մտցնել, մուծել (լծակը օղակի մեջ. մարդուն՝ բանտ. ապա-
րանջանը՝ բազկին. օղերն՝ ականջին. սուրը՝ պատյանը և այլն)»⁹ բազմիմաստ
բառարմատով:

Эргүрү — արկոռի

«Оғлана [Газан оғлу Уруза] гара кәпәнәк кејдирмишләрдә [гапылы
гара Дәрвәндә] гапы ешији үзәриндә эргүрү бурахмышларды. Кирән
басар, чыхан басарды» (78). («Տղային սև կապա էին հագցրել, դռան
շեմին՝ դրսի կողմից արկոռի թողել»):

Բնագրում բառը գործածված է երկու անգամ՝ гапы ешији үзәриндә эргү
рү бурахмышларды 11 гојмушларды, կապակցության մեջ, ուր այն ձևի
պարագա է պարզ ստորոգյալի համար:

Ուրիշ տեղ, ինչպես նաև ժամանակակից գրական աղբբեջաններում,
աղբբեջանական բարբառներում այս բառը չի հանդիպում:

Հայերենում կա Արկոռի, բայց դա աշխարհագրական հատուկ անուն է
և կապ չունի այստեղ. հայերեն բառարաններում էլ այս բառը չի արձանա-
գրված:

Օղուզ օղան-աշուղը կամ պատմագրույցը գրի առնողը ըստ երևույթին խու-
սափել է բուն օղուզերեն գոեհիկ բառը գործածելուց և դիմել է հայերեն բա-
ռին՝ արկոռի: Эргүрү «հետույքի վրա նստեցրած՝ մեջքի վրա պառկեցրած»:

Гаван(мак). күвән(мәк) — գովան(f)

«Мәним дәхи оғлум олса хан Бајындырын гаршысын алса дурса, гуллуғ
еләсә, мән дәхи бахсам, севинсәм, гывансам, күвәнсәм — деди» (43).

(«Եթե ես տղա ունենամ (ինձ տղա ծնվի), խան Բայանդուրի առաջ կանգնի,
ծառայի, ես տեսնեմ, սիրեմ, գովեմ, ապավիսնեմ, — ասաց»):

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 320—321:

Այս բառերից առաջինը՝ ГЫВАН(МАК) ժամանակակից գրական աղբյուրներում չի գործածվում, իսկ մյուսը՝ КҮВӘНМӘК՝ ձևով է և նշանակում է «1. ապավինել (մեկին), 2. պարծենալ, աքլորանալ»։ սրա արմատը առանձին գործածական չէ. չկան նաև դրանով կազմված բարդ կամ ածանցավոր բառեր։

Աղբյուրներում խոսվածքներում գտնում ենք гуалламах (Газах), гуаррамах (Шамхор), որոնք «ապավինել, հենվել, մեկին վստահել» նշանակությամբ են։

— О сән,а гуарраныр (Шамхор) — оғлун,а гуалланер (Газах) («նա քեզ է ապավինում։ Տղային է ապավինում»)։

Այս բարբառային ձևերը ճշտիվ համապատասխանում են գրական КҮВӘНМӘК բառին՝ իրենց նշանակությամբ, բայց ձևով ավելի հարազատ են ГЫВАН(МАК) բառին։ Սրանք չնայած միևնույն նշանակությունն ունեն, բայց ներկայացնում են նույն արմատի երկու տարբերակները՝ гуал-лан-ыр, гуал-ран-ер։

Այսպիսով, гуал բարբառային ձևը ներկայացնում է հյ. բարբառային գովալ «պարծենալ» բառը, որի ովա հնչյունակապակցությունը նախ դարձել է ուվա, որից էլ ստացվել է աղբյ. уа (հմմտ. թագավոր—тәкур, ազնավոր—азнаур, որոնց մեջ ավո-ү, ավու-ау)։

Հազվագյուտ երևույթ է լեզուների մեջ, երբ անորոշ դերբայի ձևը, որպես բառ լեզվից-լեզու փոխ է առնվում, բայց այդպես են աղբյ. բարբառային ձևերը՝ գովալ—гуал։ (նման մի ձև էլ մատնացույց է արված Հր. Աճառյանի հիշյալ գրքի 583-րդ էջում՝ գովել[եմ]է, որ կազմված է հյ. գովել բայով և [եմ]է ածանցով)։

«Քիթաբի Դագա Դորգուդից» վերը բերված վկայության մեջ КҮВӘН(МАК) գործածված է այն նշանակությամբ, ինչ ժամանակակից գրական աղբյուրներում՝ «ապավինել», իսկ ГЫВАН(МАК) գործածված է «պարծենալ», նաև՝ «աքլորանալ՝ սնապարծություն անել» նշանակությամբ։

Որ КҮВӘН և ГЫВАН շատ մոտ նշանակությամբ բառեր են, կարելի է չկասկածել. ինչ մնում է կազմությանը, ապա պետք է ասել, որ դրանք սերտ կերպով կապվում են հյ. գովան-ի, գովան-ф ձևերի հետ, որոնց արմատն է գով «գովեստ, հռչակ, ներբող, մեծ անուն», որը, ըստ Հր. Աճառյանի, իրանական փոխառություն է¹⁰։

Չուտ ձևական առումով դրանք՝ КҮВӘН—, ГЫВАН— նույն արմատի երկու փոփոխակներն են, մեկը КҮ թեթև տարբերակով. մյուսը ГЫ ծանր տարբերակով։

Վստահությամբ կարելի է ասել, որ աղբյուրներում բառաձևերը КҮВӘН—, ГЫВАН—, гуал—, гуә— ծագում են հյ. գովան և գովալ ձևերից, ուստի կուպ շունեն պարսկերենի հետ։

Սրանց, որպես փոխառության օգտին է վկայում նաև այն, որ աղբյուրներում սրանցով կազմված բարդ կամ ածանցավոր բառ չկա։

Гут—գուր

«Гыз ајдыр:— Гәдәми гутсуз кәлин дејинчә. удсуз кәлин десинләр» (135) («Ոտքի մուտքը անբարեհամբույր անդուլ, հարս ասելու փոխարեն թող անամոթ հարս ասեն»)։

¹⁰ Տե՛ս նույն տեղում. էջ 582։

Այս բառարմատը գտնում ենք նաև նասիմիի մոտ «Башыма гутлу ајағын кәлди басды ол никәр». («Գլխիս գթոտ ոտքդ եկավ-կպավ, ով գեղուհի», այսինքն՝ Դու ինձ բախտավորություն բերեցիր, ով գեղուհի)։

Гутсуз, гутлу նույնարմատ բառեր են, առաջինը նշանակում է «անբարեհամբույր, անգութ», որ ճիշտ բացատրված է ավանդազրույցի վերը նշված լըում (տողատակ), իսկ երկրորդը՝ փոխաբերական կիրառությամբ՝ «շնորհավոր» (էջ 162)։ ավելի ճիշտ կլինեք բացատրել «ШҮКҮМЛҮ, УҒУРЛУ, ХОШГӘДӘМ, ХОШБӘХТЛИК кәтирән — գթոտ՝ բարեհամբույր, բարեբախտություն ավետող՝ բերող»։

Այս բառերի արմատը ադրբեջաներենում, նշված ածանցավոր ձևերից զատ, ինչպես պարզ արմատական, այնպես էլ բարդ ձևերով չի գործածված։ վերը բերված բառերն էլ, որպես հնացած, անգործածական են։

Դրանք հայերեն գթոտ և անգութ բառերի թարգմանություններն են։ գութ «1. կարեկցանք, գորով, 2. սեր, 3. աղաչանք, պաղատանք», հին հայերենից ավանդված, բարդ և ածանցավոր ձևերով զարգացած և բարբառներում լայն տարածված բառ է, որը, ինչպես նաև մյուս բոլոր բառերը, ադրբեջաներենին են անցել հյ. ժողովրդական լեզվից։

Кәлиса — Եկեղեցի

«Кафирин калисасын јыхдылар...» (68). «Кәлисасын јыхыб јеринә масчид јапдым» (143). («Անհավատի եկեղեցին քանդեցին... տեղում մեջքդ ծեփեցին»)։

Ժամանակակից գրական ադրբեջաներենում այս բառը երկու ձևով է՝ килисә և килсә։ Եթե սրանք հին КӘЛИСӘ ձևի շարունակությունն են, ապա հին հյ. 1—л և շեշտված վանկի թեթև և ձայնավորի առաջընթաց մասնակի համահնչյունությամբ վերջնահնչյուն ծանր а ձայնավորը շրջվել է իր թեթև տեսակին և նույն միջին վանկի н-ի ետընթաց լիակատար համահնչյունությամբ նախավանկի ә-ն դարձել է н, որով кәлиса > килиса > килсә։

Մյուս ձևը՝ килсә, որ նորմատիվ բառարաններում ավելի ընդունվածն է, ներկայացնում է շեշտի տեղափոխության պատճառով միջին վանկի սղված ձևը։

Кәлиса գրական ադրբեջաներենին խորթ և նրա համահնչյունության օրենքին հակառակ կազմություն է և, բնականաբար, պիտի փոփոխվեր և ստանար այժմյան ձևը։ Ադրբեջաներենը փոխ է առնվել հյ. բարբառային կրդեցի (Ագուլիս), գրդեցի (Ղարաբաղ), կրդեցա ձևերից, որոնց մեջ նախաշեշտ բաց վանկի հին հյ. և-ն հապավվել-ջնջվել է։ Փոխառությունը, ինչպես երևում է, կնքված է շատ հնում, այն ժամանակ, երբ հին հյ. 1-ն դ էր։

Եկեղեցի բառում -եցի վերջավորությունը հայկական հարմարացում է և ոչ թե հունարենի հարազատ տառադարձություն¹¹, որի ց-ն ադրբեջաներենում բնականոն կերպով դարձել է с։

Тәкур — քաղալու

«Тәкур тахт үзәриндә отурмушду (96). Гәл'әнин бир тәкуру вар иди, адына Аршын оғлу Дирәк Тәкур дерләрдә (106). Тәкурун гардашы оғлу

¹¹ Նույն տեղում, հատ. Բ, էջ 679—680։

варды (98). Макәр Трабзон тәкурунун бир әзим көрклү мәһбүб ғызы варды (93). Гантуралы кәлди, гара шапгалы Тәкура сәлам верди (96). Кафирләр ајдыр: —Тәкурдан бујруг сәнә олды, сән вар! (137). («*Թագավորը թախտին նստած էր: Ի՞նչո՞ւմ մի իշխան կար, որին Արշինի որդի 'հիփակ Թագավոր էին կոչում: Տրապիզոնի թագավորը մի գեղեցկագեմ աղջիկ ուներ: Գանթուրալին եկավ, սև գլխարկով Թագավորին բարևեց*»):

Մեր մեջ բերած օրինակներից երևում է, որ այս բառը գործածված է բոլոր այն հոլովներով, որ ունեցել է ժամանակի լեզուն (адлыг: тәкур, որոշ-յալ՝ тәкуру, жіјәлик: тәкурун, բայց և՛ тәкурунун, јөнлүк: тәкура, բայց և՛ тәкурә, чыхышлыг: тәкурдан):

Այս բառը միայն մեկ անգամ գրված է մեծատառով, որ ինչպես երևում է բառակապակցությունից՝ Саг тәрәфдә Гара Тәкур Мәлијә (հմմտ. Гара тәкур II Мәлији) հատուկ անուն չէ, մնացած բոլոր 66 դեպքերում գրված է փոքրատառով և նշանակում է «քրիստոնյա կամ այլադավան իշխան, բերդապետ»:

Կարծում ենք, որ իրավացի չէ գրականագետ Ա. Երևանլին, որը գրում է, թե «Խաղա Գորգուդի» արաբատառ գրչագրում «таквр» — таквор — тагавор-ի փոխարեն «тәкур» է կարդացվել... արքա, իշխան նշանակությունն ունեցող այս բառը պատումի մեջ ստացել է ընդհանուր նշանակություն և օղուզներից բացի բոլոր ուրիշ տեղերի արքաները тәкур են կոչվել»¹²:

Եթե այս բառը հայերենում «իշխան» նշանակությունն էլ ունի, ինչպես պատումի մեջ պիտի այդ նշանակությունն ստանար և ինչո՞ւ է հաստատվում, որ արաբատառ գրչագրում անպայման таквр և ոչ թե тәкур պիտի լինի:

Хач — խաշ

Ган Абгаза елине мән кедәрәм. Алтун хача мән әлими басарам (70) («Արշունակից արխազ ցեղի մոտ ես կգնամ, Ոսկե խաշին ես ձեռք կզարկեմ»):

Ժամանակակից գրական աղբյուրներենում և բարբառներում բառս գործածվում է хач ձևով և նշանակում է ոչ միայն «խաշ», այլև քիշի սաչы, бирчәји «տղամարդու խոսուպիկ՝ մազափունջ»: Այս բառարմատով են կազմված գրական хачламаг «խաշեղ», որից՝ хачландырмаг «խաշակներել», хачпәрәст «խաշապաշտ՝ քրիստոնյա», хачпәрәстлик «խաշապաշտություն, քրիստոնեություն», այլև՝ բարբառային խաշեղկաք хачирдәх — тәнди́рин ағзыны өртмәк үчүн дәмир «թոնրի բերանը ծածկելու թիթեղ»: Хачирдәји тәнди́рин ағзына гој (Кәлбәчәр). («*խաշերկաթը թոնրի բերանին դիր*»), խաշմաјг Хачмар. Хачмәр «ары сәбәтинә хач шәклиндә гојулан чубуг, — «մեղվի կթոցում խաշածև գրվող փայտ» (Ордубад, Шаһбуз), Хачмары сәбәтә гојарлар (Ордубад). («*խաշմայրը կթոցի մեջ կգնեն*»): Хачма «**րոһ**», — Бир хачма дүјүдән бир адамлыг аш олар (Балакан) («*մեկ բոսորինձից մեկ մարդու բաժին փլավ կեփվի*»), խաշացու Харчылыг «евин үстүндән енинә гојулан тир әвәзинә («*Տան տանիքին դերանի փոխարեն խաշածև գրվող ձող*»): խաշի Харчы (Сабирабад, Исмајыллы, Муган), որը նույն

¹² Թ. Երևանлы. Նշվ. աշխ., էջ 165:

Йүзүшүлүкүшүр җ, йнз Харчылыг — Истәжирәм говағынан бир харчылыг кәсиб өө харчын салам (Сабирабад) («Илһул Һәм ҫарһул Һәм һуһуһул һуһуһул, һуһуһул һуһуһул»);

Այս բառի ադրբեջանական՝ դրական և բարբառային մյուս ձևն է նախ «երկճղի՝ խեչակ՝ նեցուկ», որով կազմված են մի շարք բառեր ու բեր. դրանցից նշենք գրական լեզվում գործածվողներից մի քանիսը. *начавуруг* «երկճղի պոչ՝ պոչավոր», *начадырнаг* «կնշակավոր», *начадил* «օծալեզու՝ երկճղի լեզվով», *началамаг* «երկթև՝ երկճղի դարձնել», *началанмаг* «երկդիմի, երկփեղկ դառնալ», *начасаггал* «երկճղի մորուքավոր» և այլն:

СҮНҮК — ծուկ

«Буғаныны өнүндөн [Гантуралы] савылды... Гу]руғундан үч кәррә көтү-
рүб іерә салды. Сүнүкләри (сүкүкләри дә охумаг олар—Н. Араслы)
хурд олду (97—98) (*Յոսիս պոռից բռնելով Լրեբ անգամ գետին զարկեց,
մնկնւորը փշրվեցին*)»;

Այս բառը աղբբեջանական բարբառներում գտնում ենք зинк (Сабирабад, Чәнуби Азәрбајчан), зынг (Салјан, Бақы), зынг (Салјан), зинкилә (Көјчај, Кировабад) ձևերով, որոնցից зинк նշանակում է «ծնկոսկր», իսկ մյուսները ներկայացնում են հյ. բարբառային «փոքր ողկույզ, ողկույզի թև՝ ճյուղ, 2. մի բանի փոքր մասը» փոխաբերական նշանակությունները. «Ինք зинкдә он-он ики килә үзим олар (Салјан). Мә би зинк үзим вер (Салјан). («Зинк բառնչյուր ծնկում 10—12 հատիկ խաղող կլինի, ինձ մի ծուկ խաղող տուր»):

Աղդբեջաներեն բարբառային ձևերը չեն ներկայացնում վերը նշված ԵՄ-
ԻՄԿ ձևի շարունակությունն ու ձևափոխությունները, այլ՝ հյ. բարբառային
ծուկ, քրոնիկ ձևերի ծ—, հնչյունափոխված տարբերակները:

ՇՄԻԿ ստացվել է ծունկ հայ ժողովրդական ձևից, որի ծ-ն բնականոն կերպով դարձել է Շ, իսկ բառավերջի նկ հնչյունակապակցությունը, որ անսովոր է թուրքական լեզուներում, այստեղ բաժանվել է մեկ ձայնավորով, որը համահնչյուն է արմատական ու—Կ ձայնավորին, որով ծունկ—ՇՄԻԿ—ՇՄԻԿ (հմմտ. նաև հյ. մուկն > մուկուն, ձուկն > ձուկուն և այլն):

Մուկ (նաև՝ ծունդ, ծունր, ծունդր) «ոտքի ծունկը» հայերենում և հայ բարբառներում մեծապես տարածված, բարդ ու ածանցավոր ձևերով զարգացած բառ է:

ԿԹՈՒՅ— կանաչ

«Кетдикдә јерин отлагларын кејик билир, Кәнәз јерләр чәмәнләрин' гу-
лан (чөл ешшәји) билир...» (13) (*Մարգարեաների կանաչ վայրերը ցը-
րուկը՝ վայրի էջը, գիտե*);

Այս բարձր ժամանակակից գրական ագրբելջաներենում և աղբրբ. բարբառներում անգործածական է: Ագրբելջաներենը փոխառնված է հյ. ժողովրդական զանազ ձևից, որի վերջնահանգ չն նախածայն ձայնեղ բաղաձայնի առաջնիքաց մասնակի ներդաշնակուիլյամբ դարձել է 3:

Կանաչ «1. կանաչ զույներ, 2. դալարիք՝ կանաչեղեն» հին հայերենից ավանդված և ինչպես բարդ ու ածանցավոր ձևերով, այնպես էլ բարբառոն-րում տարածված բառ է:

Гырв (ашмаг) — կով(ել)

«Խаман Բեյրәк атдан енди. Гарвашдылар... Բеյрәк көтүрәр гызы јерә урмаг истәр, гыз көтүрәр Բеյрәји јерә урмаг истәр» (47). Ат үзәриндә икиси гырвашдылар, дартышдылар... (129). — Гара полад үз гылычым јох ким, гырвашдығы дәм ики бичәјдим» (98) (*«Անույն Բեյրակը ձիուց իջավ: Կովեցին... Ձիու վրա երկուսը կովեցին, քաշքշվեցին...»*):

Այս բայի անորոշ դերբայը չի գործածված. բայաձևը կրկնված է երեք անգամ՝ երկու մասամբ տարբեր հիմքերով՝ гарвашдылар, гырвашдылар, гырвашдығы, առաջինը շեշտված կամ երկրորդ վանկի ձայնավորի ետընթաց լիակատար համահնչյունությամբ ы > а փոփոխությամբ է, իսկ մյուսները ներկայացնում են հայերենին հարազատ տառադարձությամբ հիմքը՝ гырв — կրով:

Կովվ. որից՝ կովել «վիճել, կովվ անել» հին հայերենից ավանդված և ժողովրդական բարբառներում լայն տարածված, բարդ ու ածանցավոր ձևերով զարգացած բառարմատ է:

Холик — հոլիկ

«Гара тәкур орада бир гору јапдырмышды. Учардан газ, говуг, јүрүдән кејик, довшан бу холијә долдуруб оғуз јикитләринә буну дәм (тәлә — Һ. Араслы) етмишди» (132). (*«Գարա թագավորը՝ իշխանը, այնտեղ մի հոր էր պատրաստել տվել: Թռչող սագ, հավ, արագավազ եղնիկ, նապաստակ էր լցրել այս հոլիկը՝ օղուզ քաջերին որպես թակարդ»*):

Ժամանակակից ադրբեջաներենում այս բառը գործածական չէ. չենք գտնում նաև բարբառներում: Վերը բերված բնագրում բառը գործածված է որպես հոմանիշ гору «հոր» բառի:

Հոլիկ հյ. ժողովրդական բառ է, որ նշանակում է «ամառանոցային հյուղակ՝ նախորդի, պարտիզպանի, դաշտային աշխատողի»¹³. կաղամությամբ ածանցավոր է, արմատն է հոլ:

Гору — հոռ

«Јолу Әлинчә гәл'әсинә уғрамышды. Гара тәкур орада бир гору јапдырмышды... Ушун гоча оғлунун јолу бу горуја уғрады. Горунун гапысын аватдылар...» (131—132) (*«Գարա թագավորը՝ իշխանը, այնտեղ մի հոր էր ծեփել տվել: Ուշի ծեր որդու ճամփան այս հորն էր տանում: Հորի դուռը քանդեցին»*):

Ժամանակակից զրական ադրբեջաներենում այս բառը չի գործածվում, միայն Ջուլֆայի ադրբ. խոսվածքում գտնում ենք սրա տարբերակը, որ նշանակում է «դարակ՝ պատի մեջ»: հәрә дуһарда олар, ора габ-гашых го-јарых, һәрәјә самавар, истәкан, нәмнә гојарых» (*«Հորը պատի մեջ է լինում. այնտեղ աման-չաման կղնենք: Հորի մեջ ինքնաեռ, բաժակ, ավսև կղնենք»*): Դժվար է ճշտիվ որոշել, թե ինչ ծագում ունի բառավերջի у-гору

¹³ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 665:

կամ ●—հօթ ձայնավորը՝ հյ. հո՛ղը, թե՛ համանուն ԲՕՐ «դերեզմանա-
վոս» բառից տարբերակելու միջոց... Թե մեկ, և թե մյուս ձևում այդ ձայ-
նավորը հանդես է եկել որպես բառի արմատական հնչյուն:

Աղբբ. բարբառային ձևում բառասկզբի հյ. ո-ն պահվել է անփոփոխ,
բայց արմատական ո ձայնավորը դարձել է ձ վերջնահնչյուն ձայնավորի ետ-
ընթաց լիակատար համահնչյունությունում, որով՝ հոր(ը)— ոօր(ə) > հօթ >
հօթ:

Հյ. հ ձայնավորը հնչյունավորվել է Դ-ի, բայց արմատական ա-ն պահ-
վել է անփոփոխ Դօրս ձևում, որովհետև օ և չ նույն որակի՝ ծանր ձայնավոր-
ներ են: Հոբ «ջրհոր, գուբ, խոր փոս» հին հայերենից ավանդված, բարդ ու
ածանցավոր ձևերով զարգացած և բարբառներում մեծապես տարածված բառ
է: «Քիթաբի Դադա Գորգուգում» այս բառը գործածված է չորս անգամ և բո-
լոր դեպքերում «գուբ, խոր փոս» նշանակությամբ:

Шуна — շուն

«Оғлан, оғлан, ај оғлан! Һарамзада оғлан! — һәрдә-мәрдә сөйләмә, Мәрә,
итим кафир! Кафир ајдыр; — Оғузун арсызы, түркманын дәлисинә бән-
зәр. Бах а, шуна! — деди» (127—128). («Տղա, տղա, այ տղա... ափեղ-
ցփեղ մի խոսիր: Տես, չքվիր, անհավատ: Անհավատն ասաց.— Օղուդի ան-
պարկեշտը թուրքմենի գծին կնամանվի: Տես, հա, շուն»):

Դժվար է հաստատապես պնդել, թե սա հյ. շուն բառն է, որովհետև կա-
րող է լինել ինչ-որ բայի հրամայական ձև: Նույն ձևի տակ, բայց բոլորովին
տարբեր նշանակությամբ մի բառ էլ գտնում ենք հետևյալ նախադասության
մեջ. «Ағбән евим шундан кечмиш көрдүңмү, декил мана!» (33), ուր шундан
բացառական հոլովաձևն է шун գոյականի: Եթե մեր զուգադրությունը ճիշտ
է, ապա դա բնիկ հայերեն շուն բառն է, որ նշանակում է «1. շուն, 2. շնացող
կին, մարդ». սա բարդ և ածանցավոր ձևերով մեծապես զարգացած և բար-
բառներում լայն տարածված բառ է, որի մանկական լեզվի օշո, օշօշ, օշին
(բոլորն էլ «շուն» նշանակությամբ) ձևերը փոխառնված են թուրքերենում¹⁴:

Чүр (үмәк) — չոր(անալ)

«Ағзын гурусун, Чобан! Дилин чүрүсүн, Чобан!» (33). Әлин гурусун,
бармагларын чүрүсүн! (61) («Բերանդ ցամաքի, Չոբան: Լեզուդ չորանա,
Չոբան: Մատերդ չորանան»): Այս բառը ժամանակակից գրական աղբբեջանե-
րենում чүрүмәк ձևով է և նշանակում է «փտել». այդ բայի հիմքով են կազմ-
ված чүрүнтү «փտվածք», чүрүтмәк «փտեցնել», чүрүк «փտած, սին», чү-
рүклүк «փտվածք, դատարկություն», чүрүкчү «դատարկապորտ, գծուծ»,
чүрүклүк «մանրախնդրություն» բառերը:

Այս բոլորի արմատն է чөр. որ առանձին անգործածական է, բայց կա
чөр-чөп «խռիվ՝ ցախ՝ մանր ձյուղեր» բարդության մեջ: Այս արմատի օ ձայ-
նավորը, ինչպես կարելի է տեսնել բերված բառերից, ածանցների Կ ձայնա-
վորի ետընթաց լիակատար համահնչյունությամբ դարձել է Կ, որով՝ чөр >
чүр: Բառարմատի թեթև օ ձայնավորն ստացվել է բնիկ աղբբեջաներեն чоп

¹⁴ Տե՛ս նույն տեղում, հատ. Ե, էջ 416:

բառի նույնորակ ձայնավորի համահնչյունության օրենքով՝ чор-чоп > чөр-чөп:

Աղբբեջաներեն բարբառներում գտնում ենք նույն արմատով կազմված հյ. շոքրան բառի ձևերն էլ. ինչպես՝ чортан (Јереван), чыртдан, чортдан, чортан (Ордубад), чортдан (Чулфа), որոնք բոլորն էլ նշանակում են «1. շոռ՝ մածուն խառնած, 2. թան՝ չրաքամված»: Չոր «1. ոչ լիաց՝ չոր, 2. լոկ, միայն, 3. կարծր, կոշտ» բնիկ հայերեն, բարդ ու ածանցավոր ձևերով զարգացած, բարբառներում լայն տարածված բառարմատ է (սրա ձայնադարձն է չիւ «չորացրած պտուղ») ¹⁵:

Сур — սուր

«Ала уран сур чиданы сахладым» (72). Әлиндәки сур чиданы мәнә вержил, јикид» (81) («Կարմիր փայլատակող սուր նիզակը պահեցի: Ձեռքիդ սուր նիզակը տուր ինձ, ով քաջ»):

Այս բառը ամբողջ գրքում գործածված է չորս անգամ և միշտ «սուր նիզակ» բառակապակցության մեջ՝ որպես որոշիչ: Արդի գրական աղբբեջաներենում և բարբառներում այն չի գործածվում:

Սուր բնիկ հայերեն բառ է, նշանակում է «1. թուր, կտրելու գործիք, 2. բահի բերանը, 3. հատու, կտրող». սա բարդ ու ածանցավոր ձևերով զարգացած և բարբառներում լայն տարածված բառ է. «Քիթաբի Դադա Գորգուղում» սուր բառը գործածված է վերը նշված երրորդ նշանակությամբ:

Дады — տատի

«Бејрәк ајдыр: — Мәрә дады, мән авчы дәјиләм, бөј оғлу бәјәм... Гыз ајдыр: — ...Мән Банычичәјинин дадысыјам» (47) («— Ով դու, տատի, ես Բանըշիշակի տատին եմ»): Այս բառը գործածված է միայն բերված տողերում՝ երկու անգամ ԴԱԿԻ արմատական ձևով, որ չունի աղբբեջաներենը, բայց նման ձևով՝ ԴՅԴՅ «1. պապ, 2. հայր» նշանակությամբ մի բառ ունի նա, որ առկա է նաև թուրքական ուրիշ լեզուներում. ինչպես՝ թուրքերեն՝ դեդե «պապ, մեծ հայր», արևելյան թուրքերեն՝ դեդե «հայր», տաճկերեն՝ դադա «ստնտու, մանկաբարձ, երեխա պահող» ¹⁶ և այլն:

Այս ԴԱԿԻ բառը իր նշանակությամբ կապվում է տաճկերեն բառի հետ, բայց քանի որ օղուգերեն Կ-ն տաճկերենում Զ-ի հնչյունափոխվելու համար պատճառ չունի (բառը լիովին ահանգի՝ համահնչյունության օրենքով է), ուստի կարծում ենք, որ այն ծագում է հյ. ժողովրդական տատի ձևից, որի վերջնահնչյուն ձայնավորը թուրքական լեզուներում, ուրեմն, նաև օղուգերենում, որպես թեթև անհամահնչյուն է բառարմատի ծանր ձայնավորի հետ և հակառակ նրա ահանգի օրենքին: Այդ է պատճառը, որ բառավերջի հյ. ի-ն դարձել է Կ: Հյ. տատի առաջացել է տատ արմատից, որը նշանակում է թե՛ «մեծ մայր» և թե՛ «մանկաբարձուհի, սնուցող կին», որով ԴԱԿԻ իր ձևով ու նշանակությամբ սերտ կերպով կապվում է հայերենին:

¹⁵ Հմմտ. Հ. ր. Աճառյան, Արմատական բառարան, չոր բառարմատի տակ:

¹⁶ Հմմտ. նույն տեղում, տատ բառարմատի տակ:

Пилан — փիլոն

«Алтун хача мән әлими басарам.

Пилан кижән кешишин әлин (мән) өпәрәм» (70), («Փիլոն հաղնող քահանայի ձեռքը ես կհամբուրեմ»—այսպես է ասում որդին՝ հորը՝ վերջինիս արարքներից դառնացած)։

Այս բառը ադրբեջաներենում՝ ինչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառներում գործածական չէ։

Բառի՝ հայերենի համեմատությամբ ունեցած ձևական տարբերությունն այն է, որ վերջնահանգ հյ. ռ ձայնավորի տեղ առկա է ձ։

Փիլոն «1. անթև վերարկու, 2. կրոնավորի վերարկու, 3. վարագույր, ծածկոց» հին հունական փոխառություն է, շատ տարածված հյ. բարբառներում «կրոնավորի վերարկու» նշանակությամբ, որով և գործածված է վերը բերված բնագրում։

«Քիթաբի Դադա Գորգուդում» կան մի շարք բառեր էլ, որոնց հայերենից փոխառյալ լինելը ստույգ որոշել չկարողացանք, ուստի այստեղ չբերեցինք։ Վերը բերված բառերից մեկ-երկուսը կասկածելի են, բայց մյուսները բացահայտորեն հայերենից անմիջաբար կամ միջնորդաբար կատարված փոխառություններ են։

Ադրբեջաներենը, որպես հայերենի դարավոր հարևան լեզու, հայերենին տվել և հայերենից փոխ է առել ինչպես առօրյա կյանքին վերաբերող սովորական, այնպես էլ արհեստներին, բնությանն ու նրա երևույթներին, կուլտուրայի զանազան բնագավառներին վերաբերող բազմաթիվ բառեր ու ոճեր։

Հատկապես ինտենսիվ է եղել նյութի կամ երևույթի փոխառությունը և դրա հետ կապված բառափոխառությունը. չէ՞ որ ժողովուրդների զարգացման հիմնական գործոններից մեկը բարիդրացիական հարաբերությունն է՝ միմյանցից սովորելը։

Վերը բերված բառերը, համարյա բոլորը, սովորական գործածության բառեր են. այդպես է, որովհետև ավանդազրույցի մեջ արհեստները, գյուղատնտեսությունը, այգեգործությունը և այլն տեղ չեն գտել (և չէին գտնի), իսկ դրանց վերաբերող բառեր, ինչպես ցույց են տալիս աղբյ. բարբառները, շատ կան։

Ավելորդ չենք համարում նշել, որ բերված բառերից 11-ը գոյական են (կեսից ավելին), ուստի և շատ սովորական՝ լեզվից-լեզու կատարվող փոխառությունների շարքում, 4-ը՝ ածական, 3-ը՝ գոյական կամ ածական հիմք բայաձևերի մեջ։

АРМЯНСКИЕ СЛОВА В «КИТАБИ ДАДА ГОРГУДЕ»

Доктор филологич. наук Р. А. БАГРАМЯН

(Р е з ю м е)

Сказание «Китаби Дада Горгуд»—одно из древних памятников литературы азербайджанского народа, ценный источник для изучения его истории, литературы, культуры и языка.

Почти во всех 12 дастанах сказа можно встретить слова, которые заимствованы из армянского языка. К их числу относятся: *եկեղեցի* «церковь»—килиса, *թագաւոր* «король, князь»—такур, *խչ* «крест»—хач, *հոր* «яма»—гору, *հոլիկ* «шалаш»—холик, *փրկոն* «фелон, ряса»—пи-лан. *տառի* «няня»—дады, *գութ* «милосердие»—гут(суз), *կանաչ* «зеленый»—кәнэз, *սուր* «острый»—сур, *չոր (տնալ)* «сохнуть, высохнуть»—чүр(үмэк), *կռկ(ել)* драться, гырв (ашмаг) и т. д. Некоторые из этих слов употребляются часто (такур—67 раз и во всех падежных формах), другие—редко (сур—4 раза, гут—1 раз и т. д.). Это свидетельствует о том, что они вошли в обиход в разное время.